



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ 13(404) «01» հունիսի 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ		
328	«2020 թվականի ամառային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-26-ն հրամանագիրը.....	4
329	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-ն հրամանագրում լրացումներ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-30-ն հրամանագիրը.....	5
330	«Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի ՆՀ-32-ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-32-ն հրամանագիրը.....	6
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
331	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 5-Ն որոշումը.....	7
332	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 19-ի N 276-Ն և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 19-ի N 277-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 6-Ն որոշումը.....	8
333	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն և Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 11-ի N 52-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 7-Ն որոշումը.....	9
334	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 18-Ն որոշումը	11
335	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 19-Ն որոշումը	12
336	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 20-Ն որոշումը	13
337	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 24-Ն որոշումը	14
338	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 25-Ն որոշումը	15

339	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը վերանվանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի N 39 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 35-Ն որոշումը	16
ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
340	«Արցախի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները սահմանելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 27-Ն որոշումը.....	24
341	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի օգոստոսի 31-ի N 43-Ս որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 29-Ս որոշումը.....	26
342	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 60-Ս որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 30-Ս որոշումը.....	28
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
343	«Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ գյուղատնտեսության նախարարի N 83 հրամանը.....	29
344	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու, լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 77 հրամանը.....	30
345	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 2-Ն հրամանը.....	31

346	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 3-Ն հրամանը.....	33
347	«Արցախի Հանրապետության ոստիկանության պետի 2018 թվականի հունիսի 28-ի N1-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ոստիկանության պետի N 2-Ն հրամանը.....	35
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
348	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/2553/02/19 որոշումը.....	36
349	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/2015/02/17 որոշումը	49

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ԵՎ ԶՈՐԱՑՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. 2020 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին անցկացնել Արցախի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության ամառային զորակոչը, որոնց 18 տարին լրացել է մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ և որոնք չեն օգտվել զորակոչի տարկետման իրավունքից կամ կորցրել են այն, ինչպես նաև մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ 18 տարին լրացող՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կողմից հաստատված ցուցակներում ընդգրկված այն քաղաքացիների, որոնք մասնակցել են բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններին և մինչև 2020 թվականի հուլիսի 15-ը չեն ներկայացրել զորակոչից տարկետման իրավունքը հավաստող փաստաթուղթ:

2. 2020 թվականի ամառային զորակոչի շրջանակներում մինչև հուլիսի 31-ը ներառյալ զորացրել օրենքով սահմանված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:

3. Արցախի Հանրապետության կառավարությանը՝ երկշաբաթյա ժամկետում ընդունել սույն հրամանագրի կիրարկումն ապահովող համապատասխան որոշում:

4. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. մայիսի 30
Ստեփանակերտ
ՆՀ-26-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-108-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության և պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-108-Ն հրամանագրի հավելվածում՝

1) 104-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով.

«2.1. Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին».

2) 105-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին ենթակետով.

«4.1. պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի նախագահին, կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին, Հայաստանի և սփյուռքի հետ ինտեգրման կոմիտեի նախագահին, պետական վերահսկողական ծառայության պետին, ինչպես նաև նրանց տեղակալներին՝ լիազոր մարմնի ղեկավարի ներկայացմամբ.»:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. հունիսի 1
Ստեփանակերտ
ՆՀ-30-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 12-Ի ՆՀ-32-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Պարետատան կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Արցախի Հանրապետության առողջապահության, գյուղատնտեսության, էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների, պաշտպանության, տարածքային կառավարման և զարգացման նախարարները, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը, արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենը, ոստիկանության պետը, պետական եկամուտների կոմիտեի նախագահը, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետը և Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետը»:

2) հրամանագրի հավելվածի 25-րդ կետում «Ֆինանսների նախարարության կողմից» բառերը փոխարինել «Պետական եկամուտների կոմիտեի կողմից բառերով»:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. հունիսի 1
Ստեփանակերտ
ՆՀ-32-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2020թ.

N 5-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 137-Ն որոշման 2-րդ կետի երրորդ պարբերությունում «2019 թվականի» բառերը փոխարինել «2020 թվականի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2020թ.

N 6-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 276-Ն ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 277-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 19-ի «Արցախի Հանրապետությունում 2020 թվականին գյուղատնտեսական համատարած հաշվառում, 2019 թվականին փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում անցկացնելու և 2020 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման հանրապետական, Ստեփանակերտ քաղաքի և շրջանային հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին» N 276-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, որոշմամբ հաստատված NN 1, 2, 3 հավելվածների վերնագրերում «2020» թվերը փոխարինել «2021» թվերով.

2) որոշման նախաբանում «2020 թվականին» բառերը փոխարինել «2021 թվականին» բառերով.

3) որոշման 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերում «2020» թվերը փոխարինել «2021» թվերով:

2. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 19-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման ծրագիրը (հարցաշարը) հաստատելու մասին» N 277-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում և 1-ին կետում «2020» թվերը փոխարինել «2021» թվերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածից հանել «**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ**» բառերը.

3) որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրում «2020» թիվը փոխարինել «2021» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Առաջարկել Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության նախագահին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում կազմել Արցախի Հանրապետությունում 2021 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնել Արցախի Հանրապետությունում 2021 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման հանրապետական հանձնաժողովին:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2020թ.

N 7-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 52-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ, 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշման N 2 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 11-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված գյուղատնտեսական ծրագրերի և միջոցառումների մասին» N 52-Ա որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 6-րդ կետում և 6-րդ կետի 1-ին տողում «44 000,0» թիվը փոխարինել «43 000,0» թվով.

2) «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «5 137 987,0» թիվը փոխարինել «5 136 987,0» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	-
	2		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	-	-	-	-
		1	Գյուղատնտեսություն	-	-	-	-
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	1 000.0	1 000.0	1 000.0
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	1 000.0	1 000.0	1 000.0
		07	Խորհրդատվական և տպագրական ծառայությունների ու մոնիթորինգի կազմակերպում	-	(1 000.0)	(1 000.0)	(1 000.0)
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	(1 000.0)	(1 000.0)	(1 000.0)

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2020թ.

N 18-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ս. Դավիթ փողոցի թիվ 8 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականությունը հանդիսացող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,0075 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2020թ.

N 19-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 0,05 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2020թ.

N 20-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 148 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի Մարիամաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Մարիամաձորի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2020թ.

N 24-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ Ն. Ստեփանյանի անվան զբոսայգու տարածքից, հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության 2,29996 հեկտար հանգստի համար նախատեսված հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2020թ.

N 25-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ նախկինում Խնածախ գյուղում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,5 հեկտար վարելահողը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 հունիսի 2020թ.

N 35-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՑՈՒՂԻ ԵՎ
ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ
ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 39 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և «Հիմնադրամների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը վերանվանել Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ հիմնադրելու մասին» N 39 որոշմամբ հաստատված՝

1) N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

2) N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:
2. Հիմնադրամն ստեղծվել է Քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» օրենքի պահանջներին համապատասխան ու իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:
3. Հիմնադրամի հիմնադիրն է Արցախի Հանրապետությունը՝ ի դեմս Արցախի Հանրապետության կառավարության: Հիմնադրամի լիազորված մարմինն է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը:
4. Հիմնադրամի անվանումն է՝
հայերեն լրիվ՝ Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ,
հայերեն կրճատ՝ ԱՀ ԳԳԱՀ,
ռուսերեն լրիվ՝ Фонд содействия селу и сельскому хозяйству Республики Арцах,
ռուսերեն կրճատ՝ ФСССХ РА,
անգլերեն լրիվ՝ Support fund of village and agriculture of the Republic of Artsakh,
անգլերեն կրճատ՝ SFVA RA:
5. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 40:
6. Հիմնադրամի գործունեության ժամկետը՝ անժամկետ է:
7. Հիմնադրամի շահառուներն են ֆիզիկական և իրավաբանական անձինք:

II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊՏԱԿՆԵՐԸ
ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Հիմնադրամի գործունեության նպատակներն են՝
 - 1) Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության զարգացումը,
 - 2) գյուղատնտեսության բնագավառում սկսնակ և գործող տնտեսավարող սուբյեկտներին աջակցություն տրամադրելը:
9. Հիմնադրամի խնդիրներն են՝
 - 1) հանրապետության շրջանների և համայնքների, գյուղական բնակավայրերի զարգացման ռազմավարական և այլ ծրագրերի մշակումը, իրականացումը և դրանց աջակցությունը.
 - 2) գիտական հետազոտությունների իրականացումը (այդ թվում՝ նաև ներգրավված մասնագետների միջոցով), փորձագիտական գնահատումների իրականացումը և պատվիրումը, արդյունքների օգտագործումը և դրանց ներդրմանն աջակցությունը.
 - 3) գիտական սեմինարների, համաժողովների, ցուցահանդեսների, ուսուցողական դասընթացների կազմակերպումը և իրականացումը.
 - 4) մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը, այդ թվում՝ այլ երկրներում.
 - 5) տեղեկատվական ցանցի ստեղծումը և տեղեկատվության տարածումը.
 - 6) Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսության բնագավառում ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցության ապահովումը,

զարգացմանը նպաստումը, սուբյեկտներին տեխնիկական, տեխնոլոգիական, ֆինանսական, ներդրումային և այլ բնույթի աջակցությունը.

7) բնական աղետներից տուժած գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտներին, ինչպես նաև գյուղական անապահով ընտանիքներին ֆինանսական և այլ բնույթի աջակցության տրամադրումը.

8) արտաքին տնտեսական գործունեության խթանումը, օտարերկրյա ներդրողների, հնարավոր գործընկերների միջև գործարար կապերի ստեղծումը.

9) նորարարական գործունեությանը, ժամանակակից տեխնոլոգիաների և համակարգչային ծրագրավորման ներդրմանը աջակցությունը.

10) առանց գրավի փոխառությունների տրամադրման մեխանիզմների մշակումը և իրականացումը.

11) հիմնադրամին ներկայացվող ծրագրերի փորձաքննությունը և հաստատումը, դրանց իրականացման աշխատանքների ֆինանսավորումը, կապալառուների և խորհրդատուների (նաև գործակալների և այլ միջնորդների) ընտրությունը.

12) հիմնադրամի բոլոր ծրագրերի նկատմամբ հսկողության ու վերահսկողության իրականացումը.

13) գյուղատնտեսության բնագավառում տնտեսավարող սուբյեկտներին խորհրդատվական և մեթոդաբանական օգնության և զարգացման հաջողակ մոդելների մշակումը և տրամադրումը.

14) առանձին ծրագրերի գծով նպատակային դրամաշնորհների տրամադրումը.

15) սեփական և ներգրավված (հովանավորչական, մարդասիրական և այլ) միջոցներով բարեգործական ծրագրերի իրականացումը:

III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

10. Հիմնադրամն ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

11. Հիմնադրամն օգտվում է իրավաբանական անձի համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

12. Հիմնադրամն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, Արցախի Հանրապետության և այլ պետությունների բանկերում հաշվարկային և այլ հաշիվներ, իր անվանմամբ ու Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ և անհատականացման այլ միջոցներ:

13. Հիմնադրամն իր անունից կարող է ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

14. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

15. Հիմնադրամը կարող է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով.

1) նախնական /արհեստագործական/ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում.

2) տվյալների փոխանցման ծառայությունների մատուցում.

3) զբոսավարի գործունեություն.

4) ուղեկցորդի գործունեություն.

5) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ օրենքով նախատեսված փորձաքննությունների իրականացում.

6) օրենքների և նորմատիվ իրավական ակտերի ոչ պաշտոնական հրատարակում.

7) անշարժ գույքի գնահատում.

8) ռիելթորական գործունեություն.

9) հրատարակչական գործ.

10) տվյալների բազայի ստեղծման գործունեություն.

11) շուկայի իրավիճակի և հասարակական կարծիքի բացահայտման հետազոտություններ.

12) նպատակային դասընթացների կազմակերպում.

13) տեխնիկական փորձարկումներ և վերլուծություններ.

14) խորհրդատվություններ՝ առևտրային գործունեության և կառավարման հարցերով.

15) գովազդ.

16) օրենքով սահմանված կարգով աճուրդների կազմակերպում և անցկացում.

17) գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգով կամ ռենտայով տրամադրում:

16. Հիմնադրամը կարող է՝

1) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել գույք, ինչպես նաև արժեթղթեր, տնօրինել, տիրապետել և օգտագործել դրանք, ինչպես նաև դրանց արդյունքում առաջացած եկամուտը.

2) ինքնուրույն ձևավորել իր ֆինանսական միջոցները, ինչպես նաև ստանալ վարկ, տրամադրել և ստանալ այլ փոխառություններ, դրամաշնորհներ և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ.

3) առանձին ծրագրերի իրականացման համար վարկային ռեսուրսներ ներգրավելու նպատակով թողարկել արժեթղթեր.

4) իրականացնել անվանական ծրագրեր՝ խոշոր միանվագ մուծումների դեպքում:

17. Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների, իսկ հիմնադիրը՝ հիմնադրամի պարտավորությունների համար:

18. Հիմնադրամը իրավունք ունի ստեղծելու ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ:

Հիմնադրամի կողմից տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների ստեղծման դեպքում հիմնադրամի՝ որպես հիմնադրի, անունից հանդես է գալիս գործադիր տնօրենը:

IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

19. Հիմնադրի՝ հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է:

20. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում ու տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից ձեռքբերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր գործունեության նպատակների ու գույքի նշանակությանը համապատասխան:

21. Հիմնադրամը կարող է որպես սեփականություն ունենալ անշարժ և շարժական գույք, դրամական միջոցներ՝ դրամ, արտարժույթ և ոչ նյութական ակտիվներ:

22. Հիմնադրամի գույքի՝ ներառյալ ֆինանսական միջոցների, գույքման աղբյուրներն են՝

1) Արցախի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող ֆինանսական և նյութական ներդրումները.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններն ու նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

3) դրամական մուտքերը պետական բյուջեից.

4) դրամաշնորհները.

5) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

6) հանգանակությունները.

7) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ աղբյուրներ:

23. Հիմնադրամի յուրաքանչյուր մասնակից, իր մուծումների չափին համապատասխան, ստանալու է վկայական: Հիմնադրամի կազմավորման և միջոցների հավաքագրման գործին մեծ նպաստ բերած անձանց հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից կարող են շնորհվել պատվավոր կոչումներ:

24. Հիմնադրամը պարտավոր է ամեն տարի հրապարակել հաշվետվություն իր սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման մասին:

V. ՀԻՄՆԱՂՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

25. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով:

Հիմնադրամի մարմիններն են՝

- 1) հոգաբարձուների խորհուրդը.
- 2) կառավարիչը՝ գործադիր տնօրենը:

26. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը չորս անձից բաղկացած հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ), որը Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ղեկավարում է հիմնադրամի գործունեությունը:

27. Խորհուրդը գլխավորում է Խորհրդի նախագահը, որն ի պաշտոնն Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարն է:

28. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը նշանակում է Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ անդամին:

29. Խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

30. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամի համար կարող է սահմանվել դրամական փոխհատուցում այն ծախսերի համար, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է Խորհուրդը:

31. Խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստն լիազոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների կեսից ավելին:

Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

32. Գործադիր տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

33. Խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա կարող են նիստ հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

Նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

34. Խորհրդի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել հիմնադրամի գործադիր տնօրենը:

35. Եթե Խորհրդի նիստում քննարկվում է Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապված անձի գույքային և այլ շահերին վերաբերող հարց, ապա Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

36. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

- 1) հիմնադրամի ռազմավարական ծրագրերի հաստատումը.
- 2) հիմնադրամի կողմից իրականացվող /այդ թվում՝ անձամբ/ ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
- 3) հիմնադրամի բյուջեի, դրանում կատարվող փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների հաստատումը.
- 4) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.
- 5) գործադիր տնօրենի ընտրության ու նրա լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.
- 6) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների մասին որոշումների ընդունումը.
- 7) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

8) գործադիր տնօրենի հաշվետվությունների լսումը, ոչ պակաս, քան տարին մեկ անգամ.

9) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

10) հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի /աուդիտորի/ ընտրությունը՝ գործադիր տնօրենի ներկայացմամբ.

11) հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.

12) հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.

13) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

14) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

15) հոգաբարձուների խորհրդին առընթեր հանձնաժողովների, հանձնախմբերի կամ խորհուրդների ձևավորումը՝ հասարակական հիմունքներով.

16) սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

37. Խորհրդի իրավասությամբ վերաբերող հարցերը կանոնադրությամբ չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

38. Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

39. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

2) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

3) կազմակերպում է նիստի արձանագրության վարումը.

4) Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ:

40. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ Խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

41. Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է կառավարիչը՝ գործադիր տնօրենը:

42. Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, ինչպես նաև այն լիազորությունները, որոնք օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված չեն Խորհրդին:

Գործադիր տնօրենը կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը:

Գործադիր տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է Խորհուրդը:

Գործադիր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրի անունից պայմանագիրն ստորագրում է Խորհրդի նախագահը:

43. Հիմնադրամի գործադիր տնօրենը՝

1) տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից.

2) ներկայացնում է հիմնադրամն Արցախի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

3) գործում է առանց լիազորագրի.

4) տալիս է լիազորագրեր.

5) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

7) խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքն ու հաստիքացուցակը.

8) սահմանում է հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների ներքին կառուցվածքը և հաստիքների քանակը՝ ըստ հաստատված կառուցվածքի և հաստիքացուցակի.

9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) սահմանված կարգով աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին:

11) աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

12) ձևավորում է հիմնադրամի գործադիր տնօրենին առընթեր հանձնաժողովներ, հանձնախմբեր և խորհուրդներ, այդ թվում՝ վճարովի հիմունքներով:

44. Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու գործադիր տնօրենի հետ կնքած պայմանագիրը՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

45. Խորհրդի նիստերն արձանագրվում են օրենքին համապատասխան:

VI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻՂԻՏԸ

46. Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը կատարվում է անկախ աուդիտորների կողմից՝ առնվազն տարեկան մեկ անգամ:

47. Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով կարող է անցկացվել արտահերթ աուդիտորական ստուգում:

48. Աուդիտորներն ընտրվում են մրցութային կարգով և հաստատվում խորհրդի կողմից: Մրցույթը կազմակերպում է գործադիր տնօրենը:

VII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

49. Հիմնադրամն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

50. Հիմնադրամի հաշվապահական հաշվառումը կազմակերպվում ու վարվում և հաշվապահական հաշվետվությունը կազմվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VIII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

51. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

52. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Արցախի Հանրապետության պետական բյուջե:»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի հունիսի 1-ի N 35-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության
«24» հունվարի 2006թ. թիվ 39 որոշման

Կ Ա Ջ Մ

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

1. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարար (Խորհրդի նախագահ)
2. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարար
3. Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ
4. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ:»:

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մայիսի 2020 թվականի

N 27-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ
ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՑԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ
ՎԱՃԱՌՔԻ ՄԱԿԱԳՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «ա» կետը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մարտի 18-ի թիվ 14Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 18-Ն որոշման հավելվածի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի 1-ին կետում նշված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի համար սահմանել՝

1) բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 23,536 ՀՀ դրամ/ կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 28,243 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

2) ոռոգման համակարգերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 15,689 ՀՀ դրամ/ կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 18,827 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) խմելու ջրատարների վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 10,461 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 12,553 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

4) արևային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 23,536 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 28,243 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

5) հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 23,536 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 28,243 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

6) կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 42,258 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 50,710 ՀՀ դրամ/կիլովատտ ժամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված սակագները կգործեն 2017 թվականի հունվարի 1-ից հետո էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ստացած իրավաբանական անձանց համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թվականի մայիսի 27
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մայիսի 2020 թվականի

N 29-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ
31-Ի N 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը և 24-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ և 38-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ՀՈԶԱՆՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի ապրիլի 27-ի հայտը՝ **Հ Ա Ն Ց ՈՒ Մ Է**.

1. Մեկ տարի յոթ ամիս ժամկետով երկարաձգել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի օգոստոսի 31-ի «ՀՈԶԱՆՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 43-Ա որոշումը «ՀՈԶԱՆՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N 0009 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման 1-ին կետում և որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «2020 թվականի մայիսի 31-ը» բառերը փոխարինելով «2021 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով:

2. «ՀՈԶԱՆՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ N 0009 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝

1) երկշաբաթյա ժամկետում, «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հուլիսի 24-ի N 652-6287 գրությամբ ՇԲԵՆ 18/133-38 երաշխիքով սահմանված 855 000 (ութ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի կեսը՝ 427 500 (չորս հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը, փոխանցել Արցախի Հանրապետության պետական բյուջե (կենտրոնական գանձապետարան 915005242325) և փոխանցումը հավաստող փաստաթղթի բնօրինակը ներկայացնել Հանձնաժողով:

2) մեկամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 855 000 (ութ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի նոր երաշխիք՝ առնվազն մինչև 2022 թվականի փետրվարի 15-ը գործողության ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 28-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թվականի մայիսի 27
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մայիսի 2020 թվականի

N 30-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 60-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, 24-րդ հոդվածի 1-ին կետը և 29-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ և 38-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Մ. Էներգո Լ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մայիսի 4-ի հայտը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է.

1. Մեկ տարի երեք ամիս ժամկետով երկարաձգել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Մ. Էներգո Լ» փակ բաժնետիրական ընկերությանը «Միություն» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի N 36-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 60Ա որոշմամբ «Մ. Էներգո Լ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N 0012 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման 1-ին կետում և որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «2020 թվականի հունիսի 11-ը» բառերը փոխարինելով «2021 թվականի սեպտեմբերի 11-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 28-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թվականի մայիսի 27

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» մայիսի 2020թ.

N 83

ք.Ստեփանակերտ

**ԲՈՒՑՄԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՃԱՌՔԻ ԼԻՑԵՆԶԻԱ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 22-րդ և 26-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 18-ի N 03 եզրակացությունը և «ԱՄԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի մայիսի 15-ին ներկայացրած լիցենզիա ստանալու մասին հայտը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Բավարարել «ԱՄԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտն ու տրամադրել բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը համապատասխան գրանցամատյանում.

2) ապահովել սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Ժիրայր Միրզոյան

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» մայիսի 2020թ.

N 77

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ
ԱՎՏՈՍՈՒՄԻՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՍԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 8-ի N356-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. **Տրամադրել՝ անհատ ձեռնարկատեր Մհեր Ռոբիկի Առստամյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով միջպետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՄՊՏՕ N00751 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2. Դադարեցնել՝

1) **անհատ ձեռնարկատեր՝ Շահեն Կառլենի Գրիգորյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00556 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

2) **ֆիզիկական անձ՝ Մհեր Ռոբիկի Առստամյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00627 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2020 թվականի մայիսի 15-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՍԱՄԻՆ**

N 2-Ն

ՀՐԱՄԱՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշները՝ «ԵՎՐՈՊԱ», "EUROPA" շարքից «Հին փոստային ուղիներ», "Ancient postal routes" թեմայով մեկական նամականիշ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածներին:

2. Գործողության մեջ դնել՝ «ԵՎՐՈՊԱ», "EUROPA" շարքից «Հին փոստային ուղիներ», "Ancient postal routes" թեմայով մեկական նամականիշ՝ սահմանելով յուրաքանչյուրի անվանագինը՝ 400-ական ՀՀ դրամ, ընդհանուր տպաքանակը՝ 12 000 հատ:


**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
 Արցախի Հանրապետության էկոնոմիկայի
 և արտադրական ենթակառուցվածքների
 նախարարի 2020թ. մայիսի 15-ի N 2-Ն հրամանի



Հավելված N 2
 Արցախի Հանրապետության էկոնոմիկայի
 և արտադրական ենթակառուցվածքների
 նախարարի 2020թ. մայիսի 15-ի N 2-Ն հրամանի



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2020 թվականի մայիսի 15-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՍԱՄԻՆ**

N 3-Ն

ՀՐԱՄԱՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշները՝ «Վայրի բնության պահպանություն» շարքից «Արցախի ֆաունա» թեմայով մեկական նամականիշ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Գործողության մեջ դնել «Վայրի բնության պահպանություն» շարքից «Արցախի ֆաունա» թեմայով մեկական նամականիշ՝ սահմանելով անվանագինը՝ 120 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 9000 հատ, անվանագինը՝ 200 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 4500 հատ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի
և արտադրական ենթակառուցվածքների
նախարարի 2020թ. մայիսի 15-ի N 3-Ն հրամանի



Հավելված N 2
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի
և արտադրական ենթակառուցվածքների
նախարարի 2020թ. մայիսի 15-ի N 3-Ն հրամանի



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

2020 թվականի մայիսի 18-ի

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 1-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 2-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի.

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝

1. Արցախի Հանրապետության ոստիկանության պետի 2018 թվականի հունիսի 28-ի «Ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելու, այն կրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» N 1-Ն հրամանով սահմանված N 2 հավելվածի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերություններում «լուսաանդրադարձնող ժապավեններ,» բառերից հետո լրացնել «փորձաքրեագետների համար՝ բաձկոն (ժիլետ),» բառերը:

2. Մույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Լ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

2020 թվականի մայիսի 18
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/2553/02/19
Քաղաքացիական գործ ԸԻԴ/2553/02/19

Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
Դատավորներ՝ Մ.Ավանեսյան
Կ.Սաղյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 22-ին ապրիլի 2020 թվական

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝
Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր՝	Հ.Աբրահամյանի
մասնակցությամբ՝ դատավորներ՝	Գ.Գրիգորյանի,
	Ա.Աբրահամյանի,
	Հ.Խաչատրյանի,
	Ի.Կարապետյանի,

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի «Պոլիգրաֆ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի ընդդեմ «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ և «Ցանկություն» ՓԲԸ՝ պահանջը զիջելու մասին պայմանագիրն անվավեր ճանաչելու և որպես դրա հետևանք՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի 21/1 հասցեով շենքի նկատմամբ «Ցանկություն» ՓԲԸ սեփականության և գրավի իրավունքի գրանցումներն անվավեր ճանաչելու, N01072019-01-0008 և N02072019-01-0010 վկայականներն ուժը կորցրած ճանաչելու մասին քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2020թ. մարտի 2-ի որոշման դեմ «Ցանկություն» ՓԲԸ ներկայացուցիչ Ռ.Երիցյանի և «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ վարչության նախագահ Ա.Սարգսյանի բերած վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի դատարան/ ընդդեմ «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ և «Ցանկություն» ՓԲԸ, «Պոլիգրաֆ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ խնդրել է անվավեր ճանաչել պահանջը զիջելու մասին պայմանագիրը /այսուհետ՝ նաև Ցեսիայի պայմանագիր/ և, որպես դրա հետևանք, անվավեր ճանաչել Ստեփանակերտ քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի 21/1 հասցեով շենքի նկատմամբ «Ցանկություն» ՓԲԸ սեփականության և գրավի իրավունքի գրանցումները և ուժը կորցրած ճանաչել N01072019-01-0008 և N02072019-01-0010 վկայականները:

Առաջին աստիճանի դատարանը 2019թ. հուլիսի 15-ի որոշմամբ հայցադիմումն ընդունել է քննության, հարուցելով քաղաքացիական գործ: Նույն օրը կայացրած մեկ այլ որոշմամբ, որպես հայցի ապահովման միջոց արգելվել է Վ.Մամիկոնյան փողոցի 21/1 հասցեով շենքի օտարումը՝ մինչև

գործով ըստ էության վերջնական դատական ակտ կայացնելը:

Առաջին աստիճանի դատարանը 2019թ. դեկտեմբերի 2-ի վճռով հայցը մերժել է:

Հայցվորը նշված վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2020թ. մարտի 2-ի որոշմամբ Առաջին աստիճանի դատարանի վճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել է. հայցը բավարարել է մասնակիորեն. «Հայրիզնեբանկ» ՓԲԸ և «Ցանկություն» ՓԲԸ միջև 2019թ. հունիսի 28-ին կնքված Ցեսիայի պայմանագիրը ճանաչել է անվավեր և որպես հետևանք՝ անվավեր է ճանաչել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված Ստեփանակերտ քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի 21/1 հասցեով շենքի նկատմամբ «Ցանկություն» ՓԲԸ գրավի իրավունքի պետական գրանցումը:

Վերաքննիչ դատարանը «Հայրիզնեբանկ» ՓԲԸ և «Ցանկություն» ՓԲԸ պարտավորեցրել է միմյանց վերադարձնել 2019թ. հունիսի 28-ին կնքված Ցեսիայի պայմանագրով ամբողջ ստացածը: Գործի վարույթը՝ վկայականներն ուժը կորցրած ճանաչելու մասով, կարճվել է՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Մնացած մասով դատական ակտը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել «Ցանկություն» ՓԲԸ ներկայացուցիչ Ռ.Երիցյանը:

Գերագույն դատարանը 2020թ. մարտի 30-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է, սահմանելով քսանօրյա ժամկետ՝ թույլ տրված ձևական սխալները շտկելու և բողոքը կրկին ներկայացնելու համար:

2020թ. ապրիլի 2-ին բողոքաբերը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որն ընդունվել է Գերագույն դատարանի վարույթ և քննության նշանակվել:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Արցախի ներդրումային հիմնադրամի գլխավոր տնօրեն Ք.Խաչատրյանը, սնանկության գործերով կառավարիչ Ա.Խաչատրյանը:

Վերաքննիչ դատարանի 2020թ. մարտի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել նաև «Հայրիզնեբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ նաև Բանկ/ վարչության նախագահ Ա.Սարգսյանը: Բողոքն ընդունվել է Գերագույն դատարանի վարույթ և քննության նշանակվել:

2. Ռ.Երիցյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերող անձը պնդում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ կետը, հստակ չի մեկնաբանել նույն օրենսգրքի 399-րդ հոդվածը, խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածները, չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության 231-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իր լիազորությունը, ինչը հանգեցրել է գործի ըստ էության սխալ լուծման:

Բողոքաբերը շեշտել է, որ վճռաբեկ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածը՝ բողոքաբերը նշել է, որ վճռաբեկ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի

մեկնաբանման և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Իր պնդումները բողոք բերող անձը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անհիմն դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ անձն էական նշանակություն է ունեցել գործարքի կնքման պահին, և դա առաջացել է այն պահից, երբ Բանկը պատրաստակամություն է հայտնել ներել տույժերն ու տուգանքները՝ 72,000 ԱՄՆ դոլարի չափով:

Բողոք բերող անձը պնդում է, որ նախ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ օրենքով սահմանված կարգով պարտքի ներում չի կատարել, դրա մասին պայմանագրում փոփոխություն չի կատարել և հրապարակայնորեն չի հայտարարել «Պոլիգրաֆ» ՓԲԸ պարտքի մի մասը ներելու մասին, հակառակ պարագայում այդ պարտավորությունը կփոխանցվեր նաև իրենց: Բանկն ուղղակի նման պատրաստակամություն է հայտնել՝ կուտակված տույժերը և տուգանքները ներելու ուղղությամբ կատարված նախնական քննարկումների տեսքով, որը և Ցեսիայի պայմանագրով փոխանցվել է նաև բողոքաբեր կողմին: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է պայմանագրի կնքման համար նախատեսված ձևով, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից: Եթե կառավարիչը գտնում է, որ տույժերն ու տուգանքները ներելու պատրաստակամություն հայտնելու պահից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ իր համար ձեռք է բերել էական նշանակություն, ապա պետք է արձանագրել, որ Բանկը նման պատրաստակամություն հայտնել է պարտապանի մայր գումարը և տուգանքները լրիվությամբ մարելու դեպքում, այն էլ՝ 2018թ. սեպտեմբերի 13-ի դրությամբ:

Այսինքն, պատրաստակամություն հայտնելու պահից մինչև Ցեսիայի պայմանագրի կնքումը անցել է մոտ մեկ տարի, իսկ այդ ժամկետը լրիվությամբ բավարար էր կառավարչի համար Բանկին դիմելու՝ սկզբնական պայմանագրում փոփոխություն կամ լրացում կատարելու համար, նշելով պարտատիրոջ անձի էական նշանակություն ունենալու փաստը: Կառավարիչը նման գործողություն չի կատարել անգամ պարտատերերի երրորդ ժողովից հետո, երբ Բանկը կրկին արտահայտել է այդ պատրաստակամությունը, ուստի հարց է ծագում. ինչի՞ց կարող էր առաջանալ Բանկի՝ էական նշանակություն ունենալու հանգամանքը, սակայն այս հարցը Վերաքննիչ դատարանի պատշաճ գնահատմանը չի արժանացել:

Բողոք բերողը հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի վերլուծությունն այն մասին, որ, օրենքով նախատեսված Ցեսիայի օբյեկտ չհանդիսացող իրավունքի կամ այլ պահանջի բացառությունների պարագայում պարտապանի համար պարտատիրոջ անձի էական նշանակություն ունենալու հանգամանքն առնվազն պետք է ի սկզբանե ամրագրված լիներ կողմերի միջև առկա հարաբերություններում: Մինչդեռ, Ցեսիայի պայմանագրի կնքման պահին նման սահմանափակումներ գոյություն չեն ունեցել, այսինքն, պարտատիրոջ անձի էական լինելու վերաբերյալ պարտապանի հետևությունները չեն բխում կողմերի միջև առկա հարաբերությունների բնույթից և պայմանավորված են տույժերը ներելու վերաբերյալ քննարկումներով, ուստի, բացակայում է նման պայմանագիրն անվավեր ճանաչելու օրինական հիմքը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը, գործին մասնակցող անձանց

պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ ըստ նույն հոդվածի 6-րդ մասի՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վերլուծելով նշված հոդվածը, բողոք բերողը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար, դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու դեպքում, դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 399-րդ հոդվածի համաձայն՝ սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Մասնավորապես, նոր պարտատիրոջն են անցնում պարտավորության կատարումն ապահովող, ինչպես նաև պահանջի հետ կապված այլ իրավունքները՝ ներառյալ չվճարված տոկոսների նկատմամբ իրավունքը:

Ըստ բողոքաբերի՝ Ցեսիայի պայմանագրով չի սահմանափակվել վարկային պարտավորություններից տույժերն ու տուգանքները ներելու կամ նման պահանջով նոր պարտատիրոջը դիմելու Հայցվորի կամ էլ պարտապանի իրավունքը:

Բողոք բերողը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2020թ. մարտի 2-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2019թ. դեկտեմբերի 2-ի վճռին:

2.1.«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ վարչության նախագահ Ա.Սարգսյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, բողոքարկվող որոշումը կայացնելիս, չի կատարել գործով ձեռք բերված ապացույցների ու փաստերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն, հիմնվել է բացառապես հայցվոր կողմի ներկայացրած, սակայն սույն գործի համար էական նշանակություն չունեցող փաստարկների վրա, սխալ է մեկնաբանել և կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես՝ սխալ է մեկնաբանել «էական նշանակություն ունեցող անձ» եզրույթը, սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը, ինչի արդյունքում կոպիտ կերպով խախտելով Բանկի իրավունքներն ու շահերը՝ կայացրել է սխալ դատական ակտ:

Բողոք բերողն իր պնդումները հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արտահայտած դիրքորոշումների և եզրահանգումների հիմքում դրել է 2018թ. սեպտեմբերի 13-ի թիվ 6405-02 գրությունը և 2019թ. հունիսի 21-ին կայացած պարտատերերի ժողովի ընթացքում Բանկի ներկայացուցչի կողմից հնչեցրած հայտարարությունը, սակայն այն պատշաճ իրավական գնահատման չի արժանացրել:

Նշված գրության ուսումնասիրությունից ակնհայտ պարզ է դառնում, որ «Պուլիզրաֆ» ՓԲԸ արդեն իսկ գտնվել էր ծանր ֆինանսական դրության մեջ, վարկն արդեն իսկ դասակարգված է եղել որպես անհուսալի, իսկ Բանկը, փորձելով հնարավորինս ընդառաջել պարտապանին ստեղծված իրավիճակում լուծում գտնելու հարցում, պատրաստականություն է հայտնել

զիջելու անհուսալի վարկի դիմաց հաշվարկված տույժերն ու տուգանքները, բացառապես պարտքի՝ վարկի մայր գումարի մնացորդի և հաշվարկված տոկոսագումարների մարման դեպքում: Այսինքն, «Պոլիգրաֆ» ՓԲԸ նկատմամբ բարի կամքի դրսևորումն առանց պատճառի և պայմանի չի եղել, և չէր էլ կարող լինել, քանի որ Բանկն, ի վերջո, շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմակերպություն է և չի կարող ցանկացած դեպքում անբարեխիղճ պարտապանի ոչ պատշաճ վարքագծի պատճառով ձևավորված պարտավորություններն ուղղակի «վերացնել»: Հետևաբար՝ նշված գրությունն ընդամենն իրենից ներկայացնում է պարտապանի կողմից ներկայացված խնդրանքին որոշակի կերպով ընդառաջելու արձագանք և որևէ կերպ չի նախատեսում այդ գործողության պարտադիր կատարում, որպիսին Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել և հաշվի չի առել այն հանգամանքը, որ զիջման պայման հանդիսացող տույժերի և տուգանքների ներման պարտավորությունը Բանկի մոտ կարող էր ծագել բացառապես պարտապանի կողմից վարկային պայմանագրով սահմանված վարկի մայր գումարի և հաշվարկված տոկոսների մարման դեպքում: Այլ կերպ ասած, պարտապան «Պոլիգրաֆ» ՓԲԸ կողմից վարկի մայր գումարը և հաշվարկված տոկոսները չմարելու պայմաններում, Բանկը, միննույն է, պատրաստակամություն հայտնելով զիջելու հաշվարկված տույժերն ու տուգանքները, հանդիսանում է էական նշանակություն ունեցող սուբյեկտ:

Բողոքաբերը պնդում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ ամեն դեպքում Բանկն էական նշանակություն է ունեցել պարտապանի համար հիմնավոր չէ, քանի որ կայացվել է առանց տույժերի և տուգանքների զիջման էական նշանակություն ունեցող պայմանի կատարմանն անդրադառնալու:

Ըստ բողոքաբերի՝ ինչ վերաբերում է 2019թ. հունիսի 21-ին կայացած պարտատերերի ժողովի ընթացքում Բանկի ներկայացուցչի հայտարարությանը, ապա այն նույնպես չի կարող որևէ կերպ հիմք հանդիսանալ Բանկին էական նշանակություն ունեցող անձի կարգավիճակ «շնորհելու» համար, հետևյալ պատճառաբանությամբ՝ այդ ժողովի ընթացքում քննարկվել է գրավի առարկա հանդիսացող տպարանի շենքը «Ցանկություն» ՓԲԸ ուղղակի գործարքով վաճառելու կառավարչի մտադրությունը, որն ի դեպ մերժվել է: Ժողովի ընթացքում քննարկվել է նաև Արցախի ներդրումային հիմնադրամի առաջարկը՝ կայանալիք աճուրդի ընթացքում պահանջվող գումարը /այն գումարը, որը կբավարարեր բոլոր պարտատերերի պահանջները/ վճարելու տարբերակը, որի քննարկման ընթացքում Բանկի ներկայացուցչին ուղղված հարցին ստացվել է պատասխան, որ Բանկը որոշակի գումար կզիջի պարտավորություններից: Ստացվում է, որ լրիվությամբ այլ հարցի քննարկման ընթացքում հնչեցրած կարծիքներն ու հայտարարությունները Վերաքննիչ դատարանը գնահատել է որպես ապացուցողական ուժ ունեցող փաստեր և դրանցից Բանկի ներկայացուցչի կողմից հնչեցրածը հիմք ընդունել իրավական նորմի կոնկրետ դրույթը Բանկի համար ոչ բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու և կոնկրետ եզրահանգում կատարելու համար:

Բողոքաբերը նշել է, որ ժողովի արձանագրության միայն մի մասն է գրավել Վերաքննիչ դատարանի ուշադրությունը, իսկ, օրինակ, այն, որ ժողովի ընթացքում «Ցանկություն» ՓԲԸ բարձրացրել է նաև իր և Բանկի միջև կնքվելիք ցեսիայի մասին հարցը, ոչ մի կերպ չի գնահատվել այն տեսանկյունից, որ 2019թ. հունիսի 21-ի դրությամբ կառավարիչը և մյուս պարտատերերը տեղյակ են եղել նման գործարքի կնքման առնչությամբ քննարկումների մասին և, բնականաբար, իրականությանը չի համապատասխանում այն, որ սնանկության գործով կառավարիչը միայն 2019թ. է իմացել գործարքի մասին, ինչպես նշել էր բողոքում:

Վերաքննիչ դատարանն, ըստ էության, հիմնվելով վերոնշյալ փաստարկների վրա ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով հիմնավոր է համարել այն հանգամանքը, որ Բանկը պարտապանի համար «ձեռք է բերել» էական նշանակություն և գտել է, որ Բանկը օրենքի խախտմամբ է կնքել Ցեսիայի պայմանագիրը:

Բողոք բերող անձն անընդունելի է համարել Վերաքննիչ դատարանի այդ մեկնաբանությունները, ուստի՝ անհիմն է դիտարկել արտահայտած դիրքորոշումը:

Առաջին ատյանի դատարանը 2019թ. դեկտեմբերի 2-ի վճռով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «...քանի դեռ Ցեսիայի պայմանագիրը կնքելու ժամանակ նշված սահմանափակումները գոյություն չեն ունեցել, իսկ պարտատիրոջ անձի էական լինելու վերաբերյալ պարտապանի հետևությունները չեն բխում կողմերի միջև առկա հարաբերություններից այլ պայմանավորված են պարտատիրոջ հետ պայմանագրով նախատեսված և/կամ տուգանքները ներելու վերաբերյալ քննարկումներով, ապա բացակայում են նման պայմանագիրն անվավեր ճանաչելու օրինական հիմքերը»:

Բողոքաբերի պնդմամբ՝ սույն գործով Հայցվորը դատարանին չի ներկայացրել թույլատրելի և վերաբերելի որևէ ապացույց, որոնցով դատարանը հաստատված կհամարեր կողմերի միջև առկա հարաբերությունների առանձնահատուկ բնույթը, նախկին պարտատիրոջ անձի՝ իր համար էական նշանակություն ունենալու հանգամանքը և որ դրանցով պայմանավորված ցեսիայի պայմանագիրը կարող էր կքնվել միայն պարտապանի համաձայնությամբ:

Այսպիսով, ամբողջ վերոշարադրյալը հաշվի առնելով, բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված բողոքարկվող որոշումը իրավական և փաստական հիմնավորում չի պարունակում, դրանում տեղ են գտել անհիմն եզրահանգումներ ու դրա հիմքում դրված տվյալները չունեն ապացուցողական նշանակություն, իսկ Ցեսիայի պայմանագրի անվավեր ճանաչելն ընդունել է որպես Բանկի և «Ցանկություն» ՓԲԸ իրավունքների կոպիտ խախտում, ուստի Վերաքննիչ դատարանի որոշումը համարել է բեկանման և փոփոխման ենթակա:

Բողոքաբերը պնդել է, որ քննարկվող հարցի առնչությամբ բարձրագույն դատական ատյանը դիրքորոշում չի հայտնել, իսկ տարբեր դատավորների կողմից տարբեր մեկնաբանություններ տալու արդյունքում իրավահարաբերությունների կողմերը հայտնվում են անհավասար իրավիճակներում: Նշել է, որ Գերագույն դատարանի արտահայտած դիրքորոշումն էական նշանակություն կունենա բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ դատական պրակտիկա ձևավորելու գործում:

Խնդրել է մասնակի՝ 2019թ. հունիսի 28-ի պահանջները զիջելու մասին պայմանագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ «Ցանկություն» ՓԲԸ գրավի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և այդ մասով այն փոփոխել՝ ամբողջությամբ մերժելով վերաքննիչ բողոքը:

3. Արցախի ներդրումային հիմնադրամի գլխավոր տնօրեն Ք.Խաչատրյանի պատասխանում հայտնած դիրքորոշումը

Վերլուծելով «Ցանկություն» ՓԲԸ ներկայացուցչի վճռաբեկ բողոքը, Ք.Խաչատրյանը նշել է հետևյալը. «...պարտապանի համար պարտատիրոջ անձի էական նշանակություն ունենալու փաստը պարզելու համար, նախ անհրաժեշտ է ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որով այդ նշանակությունը պայմանավորված է: «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ էական նշանակությունը պայմանավորված է «Պոլիգրաֆ» ՓԲԸ ունեցած

պարտավորությունների որոշակի մասը ներելու հետ, ինչը կնպաստեր ինչպես պարտատերերի մի մասի պահանջների բավարարմանը, այնպես էլ «Պոլիգրաֆ» ՓԲԸ առողջացման գործընթացին: Ցեսիայի պայմանագրի կնքմամբ «Պոլիգրաֆ» ՓԲԸ զրկվել է այդ հնարավորությունից»:

Գտնում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ, որը ենթակա չէ բեկանման:

3.1 «Պոլիգրաֆ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի պատասխանում հայտնած դիրքորոշումը

Հայտնելով իր դիրքորոշումը ներկայացված վճռաբեկ բողոքի վերաբերյալ, Ա. Խաչատրյանը պնդել է, որ այն չի ընդունում և խնդրել է մերժել վճռաբեկ բողոքը: Միաժամանակ նշել է, որ համաձայն է Արցախի ներդրումային հիմնադրամի գլխավոր տնօրեն Ք.Խաչատրյանի պատասխանում հայտնած դիրքորոշումների և հիմնավորումների հետ և գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավոր և ենթակա չէ բեկանման:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1) Առաջին ատյանի դատարանի 2017թ. սեպտեմբերի 27-ի որոշմամբ «Պոլիգրաֆ» ՓԲԸ ճանաչվել է սնանկ:

2) 2019թ. հունիսի 28-ին «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ և «Ցանկություն» ՓԲԸ միջև կնքվել է պահանջի զիջման /Ցեսիայի/ պայմանագիր:

3) «Պոլիգրաֆ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանը «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ վարչության նախագահ Ա.Միքայելյանին ուղղված 2018թ. օգոստոսի 15-ի գրությամբ խնդրել է գրոյացնել «Պոլիգրաֆ» ՓԲԸ հաշվարկված տույժերը և տուգանքները:

4) «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ վարչության նախագահ Ա.Միքայելյանն ի պատասխան «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի նշված գրության, հայտնել է, որ հաշվի առնելով «Պոլիգրաֆ» ՓԲԸ ֆինանսական դրությունը, ինչպես նաև Բանկի վարչության նախագահի առաջարկությունը տուգանքների և տույժերի զիջման կապակցությամբ՝ իր պատրաստակամությունն է հայտնում զիջելու 2011թ. սեպտեմբերի 28-ի կնքված թիվ V11-022551 վարկային պայմանագրի շրջանակներում ձևավորված անհուսալի վարկի դիմաց հաշվարկված տույժերը և տուգանքները՝ «Պոլիգրաֆ» ՓԲԸ կողմից վարկի պարտքի մայր գումարի մնացորդի և հաշվարկված տոկոսագումարների մարման դեպքում:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ գործով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հետևանքով առկա է առերևույթ

դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

արդյոք Վերաքննիչ դատարանը սույն գործով ճիշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասը, մեկնաբանելով Բանկի և Պարտապանի միջև կնքված վարկային պայմանագրի շրջանակներում ձևավորված և սնանկության գործով հաստատված դրամական պարտավորության մեջ Բանկի, որպես պարտատիրոջ անձի, էական նշանակությունը Պարտապանի համար:

ԱՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ազատ է անելու այն ամենը, ինչն արգելված չէ Սահմանադրությամբ կամ օրենքով և չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի պահպանության, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի զիջում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա:

Պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին կանոնները չեն կիրառվում հետադարձ պահանջների նկատմամբ:

Պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու համար պարտապանի համաձայնությունը չի պահանջվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Եթե պարտապանը գրավոր չի տեղեկացվել պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին, ապա նոր պարտատերը կրում է իր համար դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը: Այդ դեպքում

պարտավորության կատարումն սկզբնական պարտատիրոջը համարվում է կատարված պատշաճ պարտատիրոջը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի համաձայն՝ պարտատիրոջ պահանջի զիջումն այլ անձի թույլատրվում է, եթե դա չի հակասում օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին:

Առանց պարտապանի համաձայնության պահանջի զիջումն այն պարտավորությամբ, որում պարտատիրոջ անձն էական նշանակություն ունի պարտապանի համար, չի թույլատրվում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Մեկնաբանելով վերը նշված իրավանորմերը սույն գործով հաստատված փաստերի համատեքստում, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի վերը շարադրված իրավադրույթներով կարգավորվել է պարտավորություններում կողմերի փոփոխության հնարավորությունը, և օրենսդրի կողմից իրավունք է վերապահվել պարտատիրոջը՝ օրենքով սահմանված կարգով կատարելու անձի փոփոխություն պարտավորության մեջ, մինչև դրա դադարումը:

Օրենսդրորեն արգելվում է իրավահաջորդությունը հետևյալ՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում, որի համաձայն՝ պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված իրավունքների՝ ներառյալ ալիմենտի և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների, անցնելն այլ անձի չի թույլատրվում:

Պարտավորության մեջ պարտատիրոջ անձի փոփոխության դեպքում պարտավորությունը չի դադարում, այլ տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների փոխանցում մեկ անձից մյուսին: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի կարգավորումների հիման վրա օրենսդիրը հնարավորություն է ընձեռել պարտատիրոջը պարտապանի նկատմամբ ունեցած պահանջն այլ անձի զիջելով, դուրս գալ պարտավորությունից և իր փոխարեն պարտավորության մեջ ներգրավել այլ անձի:

Գերագույն դատարանը հարկ է համարում շեշտել, որ Ցեսիայի պայմանագրի վիճարկման դեպքում էական են հետևյալ հանգամանքների առկայությունը՝ պարտապանի համար պարտատիրոջ անձի էական նշանակություն ունենալու հանգամանքը և պահանջը զիջելու գործարքի կնքման պահին պարտատիրոջ մոտ իր անձի՝ պարտապանի համար էական նշանակություն ունենալու համոզմունքի առկայությունը, ինչպես նաև պահանջը զիջելու գործարքի օրենսդրությամբ սահմանված արգելքի առկայությունը: Եթե պահանջի զիջման դեպքում պարտապանի անձն էական չէ, ուստի պահանջի զիջումն այլ անձի կարող է իրականացվել առանց պարտապանի համաձայնության: Բացառություն են կազմում միայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերը, երբ պարտատիրոջ անձն էական նշանակություն ունի պարտապանի համար:

Գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Բանկը և պարտապանը 2011թ. սեպտեմբերի 28-ին կնքելով թիվ V11-022551 վարկային պայմանագիրը, որով հանդես են եկել՝ Բանկը մի կողմից, որպես պարտատեր և «Պոլիգրաֆ» ՓԲԸ մյուս կողմից, որպես պարտապան, մտել են քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ՝ ստանձնելով որոշակի պարտականություններ և ձեռք բերելով որոշակի իրավունքներ: Կնքված պայմանագրի հիման վրա «Պոլիգրաֆ» ՓԲԸ պարտավորվել է Բանկից ստացված գումարը վերադարձնել սահմանված ժամկետներում և կարգով: Այսինքն, պարտապանի համար պարտավորություններ են սահմանվել

պայմանագրով, որի համաձայն էլ նա պարտավոր է դրանք կատարել պատշաճ կարգով, այսինքն, պարտատիրոջ անձն այս պարագայում էական նշանակություն ունենալ չի կարող, քանի որ դա չի ազդում ստանձնած պարտավորությունների կատարման և խախտված կամ ոչ պատշաճ կատարած պարտավորությունների համար պատասխանատվություն կրելու ծավալների վրա: Բանկի կողմից Պարտատիրոջ տույժերը մասամբ ներելու մասին հայտնած պատրաստակամությունը, որպես պարտատիրոջ անձի էական նշանակություն ունենալու հիմք, ուստի, Ցեսիայի կնքման համար արգելք, չի կարող դիտարկվել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 398-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում:

Սույն գործով վիճարկելով «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ և «Ցանկություն» ՓԲԸ միջև կնքված Ցեսիայի պայմանագիրը, Հայցվորը վիճարկման հիմքում դրել է այն հանագամանքը, որ պարտատիրոջ անձը պարտապանի համար ունի էական նշանակություն և, առանց պարտապանի համաձայնության, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ չպետք է պահանջը զիջեր «Ցանկություն» ՓԲԸ: Որպես նշվածի հիմնավորում, վկայակոչել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ կողմից «Պոլիգրաֆ» ՓԲԸ պայմանագրով նախատեսված տույժերը և տուգանքները ներելու մասին կողմերի միջև կայացած պայմանավորվածությունը:

Նշվածի կապակցությամբ Գերագույն դատարանն արձանագրում է. Բանկի և Հայցվորի միջև հարաբերությունները կարգավորված են 2011թ. սեպտեմբերի 28-ին կնքված թիվ V11-022551 վարկային պայմանագրով, որով և սահմանված է կողմերի փոխադարձ իրավունքների և պարտականությունների ողջ ծավալը՝ այն է վարկի մայր գումարի մարում, տույժերի և տուգանքների, տոկոսների մարման կարգն ու ժամկետները: Հայցվորի պարտավորություններն, ամեն դեպքում, ենթակա են կատարման՝ նշված պայմանագրի ուժով և Ցեսիայի պարագայում պարտապանի իրավունքների և պարտավորությունների ծավալի փոփոխություն տեղի չի ունեցել, փոփոխվել է պարտատերը /սինգուլյար իրավահաջորդություն/, ինչը որևէ կերպ չի ազդում պարտապանի կողմից կատարման ենթակա պարտավորությունների վրա:

Գերագույն դատարանը փաստում է, որ գործով պարտատեր «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ ունեցել է օրենքով թույլատրելի հնարավորություն՝ ցանկացած անձի հետ կնքելու պահանջը զիջելու մասին պայմանագիր՝ առանց պարտապանի համաձայնության, քանի որ Ցեսիայի պայմանագիր կնքելու արգելք Բանկի և պարտապանի միջև անգամ պայմանագրում սահմանված չէ, իսկ դիտարկել Բանկը, որպես պարտապանի համար էական նշանակություն ունեցող անձ՝ իրավաչափ չէ, ուստի ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասն այս պարագայում կիրառելի չէ:

Գերագույն դատարանը գտնում է, որ նշված հարցերի մեկնաբանության ընթացքում Առաջին աստիճանի դատարանը հանգել է ճիշտ հետևության, նշելով, որ «...պահանջը զիջելու գործարքների վիճարկման դեպքում կարևոր է ոչ թե պարտապանի մոտ այն համոզմունքի առկայությունը, որ պարտատիրոջ անձն իր համար էական նշանակություն ունի, այլ նման համոզմունքի առկայություն ի սկզբանե պետք է առկա լինի պարտատիրոջ մոտ, որ իր անձը պարտապանի համար ունի էական նշանակություն: Այլապես բոլոր այն դեպքերում, երբ պարտատիրոջ մոտ ի սկզբանե բացակայել է նման համոզմունքի առկայությունը, կնքված ցեսիայի պայմանագիրը նշված հիմքով չի կարող վիճարկվել, քանի որ պայմանագրի կնքման պահին պարտատիրոջ մոտ նման համոզմունքի բացակայությունը Դատարանի գնահատմամբ չի կարող ազդել այդ պայմանագրի իրավաչափության վրա: Իսկ օրենքով նախատեսված ցեսիայի օբյեկտ չհանդիսացող իրավունքի կամ պահանջի բացառությունների պարագայում, պարտապանի համար պարտատիրոջ անձի էական նշանակություն ունենալու

հանգամանքն առնվազն պետք է ամրագրված լինի կողմերի միջև առկա հարաբերություններում՝ ի սկզբանե: Իսկ քանի դեռ ցեսիայի պայմանագիրը կնքելու ժամանակ նման սահմանափակումներ գոյություն չեն ունեցել, իսկ պարտատիրոջ անձի էական լինելու վերաբերյալ պարտապանի հետևությունները չեն բխում կողմերի միջև առկա հարաբերությունների բնույթից, այլ պայմանավորված են պարտատիրոջ հետ պայմանագրով նախատեսված տույժերը և /կամ/ տուգանքները ներելու վերաբերյալ քննարկումներով, բացակայում են նման պայմանագիրն անվավեր ճանաչելու օրինական հիմքերը:»:

Մինչդեռ նույն հարցի վերաբերյալ Վերաքննիչ դատարանը, փաստելով «...Բանկի՝ որպես պարտատիրոջ կողմից մոտ 72.000 հազար ԱՄՆ դոլար պարտավորությունը ներելու պարտապանին պատրաստակամություն հայտնելն, ըստ էության, Բանկին չի պարտավորեցնում այն ի կատար ածել, ուստի, այդ պատրաստակամությունը պարտապանին հայտնելու և այդ պահից իր՝ որպես պարտատիրոջ անձը Պարտապանի համար էական նշանակություն ձեռք բերելու պայմաններում, Բանկն առանց Պարտապանի համաձայնության Ցեսիայի պայմանագրով Ընկերությանը փոխանցելով 187.638.05 ԱՄՆ դոլար ապահովված պարտավորության, դրա նկատմամբ գրանցված Բանկի գրավի /հիպոթեքի/ իրավունքի և ԸԻԴ/2236/02/14 գործով Դատարանի 2015թ. հուլիսի 25-ին օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա հոգուտ Բանկի բռնագանձման ենթակա 993.925,30 ՀՀ դրամ անվանական արժեքով պահանջները...», գտել է, որ Բանկը խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը և արձանագրել, որ Բանկն առանց պարտապանի համաձայնության Ընկերության հետ Ցեսիայի պայմանագիր կնքելու իրավունք չունի:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումները հիմնավոր չեն և հանգեցրել են գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված իրավադրույթների մեկնաբանման համատեքստում, Գերագույն դատարանն օրինական և հիմնավորված է համարում Առաջին ատյանի դատարանի հետևյալ եզրահանգումը.

«Դատարանը գտնում է, որ սույն գործով թույլատրելի և վերաբերելի որևէ ապացույցով չի հիմնավորվել պարտատեր «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Պոլիգրաֆ» ՓԲԸ համար էական նշանակություն ունենալու հանգամանքը, հետևաբար դրա բացասական հետևանքները պետք է կրի Հայցվորը:»

Վերոշարադրյալ իրավանորմերի և սույն գործի փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ գործով բացակայում են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ և «Ցանկություն» ՓԲԸ միջև 2019թ. հունիսի 28-ին կնքված Ցեսիայի պայմանագիրն անվավեր ճանաչելու բավարար հիմքերը, ինչպես նաև որպես հետևանք «Պոլիգրաֆ»

ՓԲԸ սեփականության իրավունքով պատկանող Ստեփանակերտ քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի 21/1 տպարանի նկատմամբ «Ցանկություն» ՓԲԸ գրավի իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, թիվ 01072019-01-0008 և թիվ 02072019-01-0010 գրանցման վկայականներն ուժը կորցրած ճանաչելու համար:

Ամփոփելով վերոշարադրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Գերագույն դատարանը եզրահանգում է, որ վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը բավարար է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 241-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով Վերաքննիչ դատարանի քննարկվող որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը՝ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում Գերագույն դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Նշված դիրքորոշման համար Գերագույն դատարանը հաշվի է առնում նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է նույն կոնվենցիայով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումը վտանգ է պարունակում նշված իրավունքի խախտման համար:

Գերագույն դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Անդրադառնալով պետական տուրքի հարցին, Գերագույն դատարանը գտնում է, որ այն պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Ցանկություն» ՓԲԸ ներկայացուցիչ Ռ.Երիցյանի և «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ վարչության նախագահ Ա.Մարգարյանի վճռաբեկ բողոքները բավարարել: Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2020թ. մարտի 2-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019թ. դեկտեմբերի 2-ի վճռին:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ Վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/2015/02/17
Քաղաքացիական գործ ԸԻԴ/2015/02/17

Նախագահող դատավոր՝ Մ.Ավանեսյան

Դատավորներ՝ Լ.Ավանեսյան

Ն.Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

23-ին ապրիլի 2020 թվական

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝
Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր՝
մասնակցությամբ՝ դատավորներ՝

Գ.Գրիգորյանի,
Հ.Աբրահամյանի,
Ա.Աբրահամյանի,
Հ.Խաչատրյանի,
Ի.Կարապետյանի,

դռնբաց դատական նիստում քննության առնելով ըստ հայցի Գարուն Սերգեյի Դադայանի ընդդեմ Ալբինա Ահարոնի Կարապետյանի՝ ինքնակամ կառույցը քանդելուն և խոչընդոտը վերացնելուն պարտավորեցնելու պահանջների վերաբերյալ ԸԻԴ/2015/02/17 քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2020 թվականի փետրվարի 11-ի որոշման դեմ հայցվոր Գ.Դադայանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Գարուն Սերգեյի Դադայանը (այսուհետ, նաև՝ Հայցվոր) 2017 թվականի հունիսի 20-ին հայցադիմում է ներկայացրել ԱՀ ընդանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) ընդդեմ էդուարդ Բենյամինի Դադայանի՝ ինքնակամ կառույցը քանդելուն և խոչընդոտը վերացնելուն պարտավորեցնելու մասին պահանջներով:

Առաջին ատյանի դատարանի (դատավոր Ռ.Ջհանգիրյան) 2017 թվականի հունիսի 21-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ հրավիրվել է նախնական դատական նիստ:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ Հայցվորը 2017 թվականի օգոստոսի 3-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով ԱՀ վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2017 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է և վերացրել Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հուլիսի 31-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է և հրավիրվել նախնական դատական նիստ:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ Բենիամին Բենյամինի Դադայանը, Ալբինա Բենյամինի Հարությունովան և Անահիտ Բենիամինի Գրիգորյանը ներգրավվել են որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ պատասխանող կողմում:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ գործը նշանակվել է դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումներով գործով նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն և գործի վարույթը կասեցվել:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է և նշանակվել դատաքննության:

Առաջին ատյանի դատարանի (դատավոր Դ.Մելքումյան) 2018 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ գործն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հունվարի 25-ի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է մինչև Էդուարդ Դադայանի մահից հետո իրավահաջորդություն տեղի ունենալը:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ Էդուարդ Դադայանը փոխարինվել է իրավահաջորդով՝ Արինա Ահարոնի Կարապետյանով, իսկ գործի վարույթը վերսկսվել է և նշանակվել դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 01-ի որոշումներով բավարարվել են պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի և Հայցվորի ներկայացուցիչ Ա.Գալստյանի ապացույց պահանջելու մասին միջնորդությունները, իսկ 2019 թվականի հուլիսի 17-ի որոշման մեջ ուղղվել է թույլ տրված վրիպակը՝ «Արինա Ահարոնի Կարապետյան» գրառումը փոփոխելով «Ալբինա Ահարոնի Կարապետյան» (այսուհետ, նաև՝ Պատասխանող) գրառմամբ:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 22-ի վճռով հայցը բավարարվել է:

Նշված վճռի դեմ Պատասխանողի ներկայացուցիչ Վլադիմիր Հայրապետյանը 2019 թվականի դեկտեմբերի 23-ին բերել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության:

Վերաքննիչ դատարանի 2020 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է. մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 22-ի վճիռը և հայցը մերժվել:

Նշված որոշման դեմ Հայցվորը 2020 թվականի մարտի 11-ին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալու խնդրանքով:

Գերագույն դատարանի 2020 թվականի ապրիլի 03-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ բողոքի գրավոր պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքնհիշյալ հիմնավորումներով.

Ըստ ներկայացված վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է

տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 121.1-րդ և 229-րդ հոդվածների պահանջները, սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ, 192-րդ, 1193-րդ, 1195-րդ հոդվածները, պետք է կիրառեր, սակայն չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև սխալ է մեկնաբանել ԸԻԴ/1074/02/17 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վերաքննիչ դատարանը, չպահպանելով օրենսդրության պահանջներն ու ի խախտումն Գերագույն դատարանի ԸԻԴ/2624/02/17 և ԸԻԴ/0974/02/10 քաղաքացիական գործերով արտահայտած իրավական դիրքորոշումների, դուրս է եկել վերաքննիչ բողոքի սահմաններից ու քննության առարկա դարձրել Պատասխանողի, որպես Է.Դադայանի իրավահաջորդի, պատասխանատվության հարցը և այդ մասով սխալ որոշում կայացրել, այն էլ այն դեպքում, երբ օրենսդիրը՝ միանշանակ, աներկբա ու անվիճելի նշում է այն անձի (անձանց) պատասխանատվության շրջանակը, ով շահագրգիռ անձի բողոքի հիման վրա պատասխանատվություն է կրում չօրինականացված ինքնակամ կառույցը քանդելու մասով (հողի սեփականատերը, այլ ոչ թե՝ չօրինականացված ինքնակամ կառույց կառուցողը):

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել նաև Գերագույն դատարանի ԸԻԴ/1496/02/12 քաղաքացիական գործով 22.10.2014թ. որոշմամբ արտահայտած դիրքորոշումները, քանի որ այդ գործի փաստական հանգամանքները համանման չեն սույն գործի փաստական հանգամանքներին, հետևաբար նաև կիրառելի չեն սույն գործով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի մեկնաբանություններն անհիմն են նաև ժառանգության հետ կապված հարցերի առումով, քանի որ ստացվում է անտրամաբանական մի իրավիճակ, որ օրինական շինությունը՝ այն կառուցած սեփականատիրոջ մահվանից հետո կարող է կտակվել կամ այլ կերպ օտարվել օրինական հիմքերով, իսկ անօրեն շինությունը՝ այն կառուցած սեփականատիրոջ մահվանից հետո՝ քանդելու տեք չունի:

Նշվածները, ըստ բողոքաբերի, հնարավորություն են տալիս պնդել, որ սույն գործով անհրաժեշտ է Գերագույն դատարանի որոշումը՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու առումով:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի 2020 թվականի փետրվարի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 22-ի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ստեփանակերտ քաղաքի Հովհ. Թումանյանի 4/1 հասցեով 0.0381 քառ.մ մակերեսով բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի, ավտոտնակի և շվաքարանի նկատմամբ 17.10.2014թ. գրանցված է Գարուն Դադայանի 2/3, Ալբինա Հարությունովայի 5/24, Բենիամին Դադայանի 1/24, Էդուարդ Դադայանի 1/24, Անահիտ Գրիգորյանի (Դադայանի) 1/24 բաժիններով ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը,

2) Ստեփանակերտ քաղաքի Հովհ. Թումանյանի 4 հասցեով բնակելի տան նկատմամբ 09.12.2015թ. գրանցվել է Էդուարդ Դադայանի, Բենիամին Դադայանի, Անահիտ Դադայանի ընդհանուր համատեղ սեփականության

իրավունքը, իսկ 0.0381 հա հողամասի, 21.74 քառ.մ մակերեսով ավտոտնակի, 22.74 քառ.մ մակերեսով շվաքարանի նկատմամբ գրանցված է վերջիններիս յուրաքանչյուրի 1/24, Ալբինա Հարությունովայի 5/24, Գարուն Դադայանի 2/3 բաժիններով բաժնային սեփականության իրավունքը,

3) Էդուարդ Դադայանը մահացել է 21.12.2018թ., նրա մահից հետո նրան պատկանող գույքի վերաբերյալ բացված ժառանգությունը, համաձայն 17.09.2019թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ ընդունել է Ալբինա Կարապետյանը,

4) Պատասխանողի իրավանախորդ Էդուարդ Դադայանը Ստեփանակերտ քաղաքի Հովհ. Թումանյանի 4 և 4/1 հասցեներով բնակելի տների ընդհանուր բաժնու կառուցել է ինքնակամ շինություններ՝ ընդլայնել է ավտոտնակը, կառուցել շվաքարան, թռչունների և կենդանիների համար նախատեսված բներ, հիմնել բանջարանոց ու ցանկապատել այն՝ խախտելով բաժնային սեփականության մասնակից Հայցվորի այդ գույքի տիրապետման և օգտագործման իրավունքը:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Գերագույն դատարանը փաստում է, որ վճռաբեկ բողոքում բարձրացված է երկու հարցադրում, որոնցից առաջինը վերաբերում է ինքնակամ կառույցի և նեգատոր հայցի հասկացությանը, իսկ երկրորդը՝ դրանց սահմաններում Պատասխանողի պարտավորությունների ծավալին:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ դիմելով դատարան, Հայցվորը խնդրել է Էդուարդ Դադայանին պարտավորեցնել քանդել ինքնակամ կառույցն ու վերացնել իր սեփականության իրավունքի խոչընդոտը:

Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով ինքնակամ կառույցների առկայության և Հայցվորի իրավունքների խախտման փաստը, դատաքննության ընթացքում կատարել է դատավարական իրավահաջորդություն և բավարարել հայցը:

Պատասխանող կողմը ներկայացրել է վերաքննիչ բողոք և վիճարկել Պատասխանողի (ինչպես նաև՝ նրա իրավանախորդի) կողմից որևէ ինքնակամ կառույց կառուցած կամ Հայցվորի սեփականության իրավունքին որևէ խոչընդոտ հարուցած լինելու Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստերը:

Վերաքննիչ դատարանը՝ անհիմն համարելով վերաքննիչ բողոքի փաստարկները, այնուամենայնիվ արձանագրել է, որ Պատասխանողը որևէ կերպ չի կարող պարտավորություն կրել իր իրավանախորդի գործողությունների համար: Նշվածը ձևակերպվել է հետևյալ կերպ՝

1. ինքնակամ կառույցի մասով. «... անօրինական կառույց իրականացրած անձի իրավահաջորդը կամ հողամասի բաժնային սեփականության իրավունքի մասնակիցը՝ Պատասխանողը, չի կարող պատասխանատվություն կրել իր իրավանախորդի կողմից այդ հողամասի վրա կառուցված ինքնակամ կառույցի քանդման հարցում»,

2. նեգատոր հայցի մասով. «... խոչընդոտը վերացնելու պարտավորությունը, անխզելիորեն կապված է խոչընդոտ ստեղծած անձի հետ, քանի որ այն

արդյունք է կոնկրետ այդ անձի հակաիրավական գործողությունների: Նեգատոր հայցով որպես պատասխանող հանդես է գալիս սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի իրավունքը խախտող անձը, այսինքն՝ հակաիրավական գործողություններ իրականացրած իրավախախտը, ու նա էլ պատասխան է տալիս իր իսկ հակաիրավական գործողությունների համար: Ժառանգը որևէ կերպ չի կարող պատասխանատվություն կրել իր իրավանախորդի հակաիրավական այն գործողության համար, որն այլ անձի սեփականության իրավունքի իրացման համար առաջացրել է խոչընդոտներ»:

Այսինքն, և՛ Առաջին ատյանի, և՛ Վերաքննիչ դատարանները Պատասխանողի իրավանախորդ էդուարդ Դադայանի կողմից Ստեփանակերտ քաղաքի Հովհ. Թումանյանի 4 և 4/1 հասցեներով բնակելի տների ընդհանուր բակում ինքնակամ շինություններ կառուցելու և բաժնային սեփականության մասնակից Հայցվորի գույքի տիրապետման և օգտագործման իրավունքը խախտելու փաստերի առումով արտահայտել են նույն դիրքորոշումը, սակայն իրավահարաբերության պարտավոր մասնակցի առումով հանգել տարբեր կարծիքների: Ընդ որում, ստորադաս դատարանները՝ «ինքնակամ կառույցի» իրավական ճակատագրի և նեգատոր հայցի ինստիտուտի վերլուծությունն իրականացրել են ԱՀ գործող նյութական օրենսդրության և Գերագույն դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումների համատեքստում (մասնավորապես, ԸԲԴ/1496/02/12 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 22-ի և ԸԲԴ/1074/02/17 քաղաքացիական գործով 2018 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումները):

Գերագույն դատարանը փաստում է, որ սույն որոշմամբ նախանշված առաջին հարցադրման կապացույթամբ ստորադաս դատարանները նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում թույլ չեն տվել:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցադրմանը, ապա ստորադաս դատարաններն արձանագրելով, որ ինքնակամ կառույցն իրականացրել և Հայցվորի սեփականության իրավունքին խոչընդոտ հարուցել է էդուարդ Դադայանը, կապված վերջինիս մահվան փաստի հետ՝ տարբեր եզրահանգման են եկել նրա իրավահաջորդի՝ Պատասխանողի, քաղաքացիաիրավական պատասխանատվության ծագման հարցի վերաբերյալ: Ըստ Առաջին ատյանի դատարանի՝ Պատասխանողը պետք է իր իրավանախորդի փոխարեն ստանձնի ինքնակամ կառույցը քանդելու և Հայցվորի իրավունքների խախտումները վերացնելու պարտավորությունը, իսկ ըստ Վերաքննիչ դատարանի՝ ոչ:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Պատասխանողի՝ սույն գործով առաջադրված հայցապահանջների շրջանակում պարտավորություն կրելու հարցը պետք է դիտարկել «իրավահաջորդության» ինստիտուտի լույսի ներքո: Այսպես

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն.

1. Դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու դեպքում (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում) դատարանը կատարում է այդ կողմի փոխարինում նրա իրավահաջորդով՝ այդ մասին նշելով որոշման մեջ: Իրավահաջորդությունն հնարավոր է դատավարության ցանկացած փուլում:

2. Այն բոլոր գործողությունները, որոնք կատարվել են դատավարության ընթացքում մինչև իրավահաջորդի՝ գործի մեջ մտնելը, նրա համար պարտադիր են այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին այն անձի համար, որին փոխարինել է իրավահաջորդը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ իրավահաջորդության ծագման համար որպես ընդհանուր կանոն օրենսդիրը նախատեսել է վիճելի

իրավահարաբերության սուբյեկտային կազմի փոփոխությունը՝ կողմի դուրս գալը: Իր հերթին, իրավահաջորդությունը վերաբերում է ն՝ նյութական, ն՝ պարտավորական իրավահարաբերություններին:

Գերագույն դատարանը փաստում է, որ ԱՀ գործող իրավակարգավորումները նախատեսել են նյութական և դատավարական իրավահաջորդության ինստիտուտներ: Ընդ որում, դատավարական իրավահաջորդությունը պայմանավորված է նյութական իրավունքի շրջանակներում ծագող իրավահաջորդությամբ: Վերջինս կարող է լինել ընդհանուր, երբ իրավահաջորդին են անցնում իրավանախորդին պատկանող սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ամբողջ խումբը (օրինակ՝ քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում), և մասնակի (սինգուլյար), երբ փոխանցվում են առանձին իրավունքներ և պարտականություններ (օրինակ՝ պահանջի զիջում, պարտքի փոխանցում):

Գերագույն դատարանը փաստում է, որ ի տարբերություն նյութական իրավունքի ինստիտուտ համարվող իրավահաջորդության՝ դատավարական իրավահաջորդությունը միշտ ընդհանուր է: Վերջինիս բնույթն արտահայտվում է նրանում, որ իրավանախորդի դատավարական իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդին են փոխանցվում ամբողջ ծավալով և իրավանախորդի դատավարական գործողությունների բոլոր հետևանքները տարածվում են իրավահաջորդի վրա:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործի քննության ընթացքում իրավահաջորդության կիրառման հիմք է հանդիսացել դատավարության կողմ հանդիսացող քաղաքացու՝ Էդուարդ Դադայանի, մահը: Այդ փաստով պայմանավորված, Առաջին ատյանի դատարանը կիրառել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ կետի կարգավորումները (դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն) և կասեցրել գործի վարույթը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Էդուարդ Դադայանի մահից հետո նրան պատկանող գույքի վերաբերյալ բացված ժառանգությունը, համաձայն 17.09.2019թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի ընդունել է Պատասխանողը:

Սակայն միայն նշված փաստի արձանագրումն ինքնին չի առաջացնում դատավարական իրավահաջորդություն. անհրաժեշտ է դատական որոշում, որով քաղաքացիաիրավական հարաբերության սուբյեկտը ճանաչվում է որպես դատավարական իրավահաջորդ: Նման որոշում կայացնելուց առաջ դատարանն անհրաժեշտաբար ուսումնասիրում է վիճելի իրավահարաբերության բնույթն ու պարզում դրա հիմքում դրված քաղաքացիաիրավական հարաբերության իրավահաջորդության թույլատրելիության հարցը: Վերջինս, իր հերթին, դատարանին հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվել դատավարական իրավահաջորդության առկայության կամ բացակայության փաստի արձանագրման, և ըստ այդմ՝ հետագա դատավարական գործողությունների իրականացման հարցում: Դատավարական իրավահաջորդության թույլատրելիության դեպքում կասեցված գործի վարույթը վերսկսվում է, իսկ հակառակ պարագայում՝ գործի վարույթը կարճվում:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման շրջանակներում 2019 թվականի հուլիսի 17-ին որոշում է կայացրել գործի վարույթը վերսկսելու մասին: Այսինքն՝ սույն քաղաքացիական գործով քննության ենթակա վեճի առանցքը կազմող

իրավահարաբերության իրավահաջորդությունն Առաջին ատյանի դատարանի կողմից դիտարկվել է թույլատրելի:

Գերագույն դատարանը, անդրադառնալով նյութական իրավունքում անձի մահվան փաստով պայմանավորված իրավահաջորդության թույլատրելիության հարցին, անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքի կանոններով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1195-րդ հոդվածի համաձայն.

«1. Ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

2. Ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես՝

1) ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները.

2) քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքը.

3) անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները.

4) այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում սույն օրենսգրքով և այլ օրենքներով»:

Նշվածներից բխում է, որ ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված գույքային իրավունքներն ու պարտականությունները չեն մտնում ժառանգական զանգվածի մեջ: Դրա մեջ չեն մտնում նաև այն գույքային իրավունքներն ու պարտականությունները, որոնց ժառանգության կարգով փոխանցումն արգելված է քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով: Մասնավորապես, ժառանգական զանգվածի մեջ չեն մտնում ալիմենտ ստանալու իրավունքն ու ալիմենտային պարտավորությունը, գույքի անհատույց օգտագործումից բխող իրավունքներն ու պարտականությունները, հանձնարարությունը, կոմիսիան, գործակալական պայմանագրերը և այլ:

Դատավարական իրավահաջորդությունն իր հերթին անհնար է նաև, եթե դատավարությունից դուրս եկած անձի վիճարկվող իրավունքները կամ պարտականություններն անխզելիորեն կապված են նրա անձի հետ (օրինակ՝ պատվի և արժանապատվության պաշտպանության, առողջությանը պատճառված վնասի հատուցման, հայրության ճանաչման, աշխատանքում վերականգնման և այլ պահանջների դեպքերում), կամ այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով իրավահաջորդությունն արգելված է:

Այս համատեքստում դիտարկելով ինքնակամ կառույցն իրականացրած և նեգատոր հայցով խոչընդոտները վերացնելու պարտականությունը կրող անձի համար գոյություն ունեցող իրավահարաբերությունները, Գերագույն դատարանն արձանագրում է, որ դրանք չեն կարող համարվել անձի հետ անխզելիորեն կապված պարտավորություններ, այն պարզ պատճառով, որ քաղաքացու մահվան փաստով պայմանավորված որևէ փոփոխության չի ենթարկվում ինքնակամ կառույցի ճակատագիրը, իսկ անձի սեփականության իրավունքի խոչընդոտն ինքնաբերաբար չի վերանում (այսինքն, իրավահարաբերությունը շարունակվում է): Հետևաբար, նշված իրավահարաբերությունը թույլատրում է իրավահաջորդություն, իսկ վերջինիս առկայությունն իր հերթին, բերում է դատավարական ընդհանուր իրավաջորդության փաստմանն ու դրանից բխող բոլոր հետևանքների կիրառման իրավաչափությանը:

Նշվածներից բխում է, որ Վերաքննիչ դատարանը՝ արձանագրելով Էդուարդ Դադայանի կողմից ինքնակամ կառույցներ իրականացրած լինելու և Հայցվորի սեփականության իրավունքին խոչընդոտներ հարուցած լինելու փաստը (ինչը շարունակվում է նաև ներկայումս), պետք է նրա փոխարեն օրենսդրությամբ և դատական պրակտիկային համահունչ համապատասխան գործողություններ կատարելու պարտավորությունը (ինքնակամ կառույցը քանդելու և խոչընդոտը վերացնելու վերաբերյալ) Պատասխանողի վրա դնելու Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը համարել հիմնավորված և օրինական: Դրան հակառակ, Վերաքննիչ դատարանն ինքնակամ կառույցը քանդելու և նեգատոր հայցով խոչընդոտը վերացնելու ուղղությամբ որոշակի գործողություններ կատարելու պարտավորությունը համարել է անձի հետ անխզելիորեն կապված պատասխանատվության տարատեսակ (և՛ ըստ այդմ, փաստացի արձանագրելով նյութական և դրանից բխող՝ դատավարական իրավահաջորդության անթույլատրելիությունը), բեկանել է ստորադաս դատարանի դատական ակտը և հայցը մերժել: Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ նույնիսկ նշված դիրքորոշման պարագայում հայցի մերժման վերաբերյալ եզրահանգումը չի կարող հիմնավորված համարվել, քանի որ՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«... Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝
(...).

9) առկա են սույն օրենսգրքի 99-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը:»:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը:

Այսինքն՝ դատավարության մասնակցի մահվան փաստով պայմանավորված դատարավարական իրավահաջորդություն առկայության պայմաններում վերադաս դատական ատյանի կողմից վիճելի իրավահարաբերության առումով իրավահաջորդության անթույլատրելիության փաստ արձանագրելու դեպքում, վերադաս դատական ատյանն անվերապահորեն պետք է բեկանի դատական ակտը, սակայն իրավասու է կայացնել միայն մեկ որոշում, այն է՝ գործի վարույթը կարճելու մասին:

Ամփոփելով, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով և հայցապահանջը մերժելով, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի խախտում, ինչը հիմք է դատական ակտը բեկանելու համար: Իր հերթին, Առաջին ատյանի դատարանը որևէ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում թույլ չի տվել: Ուստի, սույն բողոքի քննության շրջանակներում կիրառման ենթակա է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը՝ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում Գերագույն դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

ԱՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքը մարդու՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ապահովելուն ուղղված միջազգային և ներպետական նորմերով ամրագրված և երաշխավորվող սուբյեկտիվ դատավարական իրավունքների համակցություն է, որը յուրաքանչյուրին ապահովում է օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարան առանց խոչընդոտի դիմելը, երաշխավորում է գործի քննությունը հրապարակայնության, կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում իրականացվելը, ապահովում է հիմնավորված դատական ակտ ստանալը, ինչպես նաև երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքի խախտմանը հանգեցնող արդար դատաքննության իրավունքի մաս կազմող որևէ իրավունքի խախտման վերացման հնարավորությունը:

Դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նախևառաջ խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքը, իսկ մյուս կողմից՝ դատարանի պարտականությունը՝ քննելու գործը և նրանով կայացնելու օրինական և հիմնավորված որոշում:

Հաշվի առնելով, որ սույն գործի շրջանակներում նոր քննություն կատարելու կամ որևէ այլ հանգամանք պարզելու անհրաժեշտություն առկա չէ, Գերագույն դատարանը գտնում է, որ պետք է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի վճռին:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներին:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: ... 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան»:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ծախսերը բաղկացած են միայն պետական տուրքից, որը վճարվել է Հայցվորի կողմից:

Գերագույն դատարանը, նկատի ունենալով, որ սույն վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ Առաջին ատյանի դատարանը բավարարել է ներկայացված հայցը, գտնում է, որ դատական ծախսերը պետք է կրի

պատասխանող կողմը: Հետևաբար, անհրաժեշտ է Ալբինա Կարապետյանից
հոգուտ Գարուն Դադայանի գանձել 66.300 (վաթսունվեց հազար երեք հարյուր)
ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական
դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 256-րդ
հոդվածի 1-ին մասով

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Արցախի Հանրապետության
վերաքննիչ դատարանի 2020 թվականի փետրվարի 11-ի որոշումը և
օրինական ուժ տալ Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության
առաջին աստիճանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 22-ի վճռին:

2. Ալբինա Ահարոնի Կարապետյանից հոգուտ Գարուն Սերգեյի
Դադայանի գանձել 66.300 (վաթսունվեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ,
որպես դատական ծախսերի փոխհատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի
դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ
բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ